

- 25 Ուր նա բազմիցս ելեալ յատեան
Վըստահութեամբ իւր սեպհական
Քարոզէր զՕբան տէրունական
Յականջս ուխտի տեղւոյն իջման :
- 26 Զօկն անհատից աղքանագեան
Որ կեայր անդրէն զերթ միաբան ,
Մեծ հաճութեամբ զՕմայլէր ընդ բան
Զոր Սարգսի մեր ճառէր բերան :
- 27 Իսկ ի միւս ամ ի դալ զարնան
Տըւեալ զողջոյն հրաժարական
Վեհին ւ՛ այլոց ընդհանրական
Չողայր անտի յիւր թեմ հաւան :
- 28 Անտուտ ապա յարքունական
Շքքեղ Պօլիս Կոստանդինեան
Ողջամբ զըւարթ լինէր ժաման
Սարգիս փառօք իւր հովուական :
- 29 Ուր Պատրիարք տեղւոյն Յօհան
Որ հօգեւոր հայրն էր արժան ,
Եւ դասակիցք նորին համայն
Գըրկեալ ըղնա ուրախանան :
- 30 Անդ եւ ծնողք իւր մարմնական
Հոյլք սիրելեաց ողջ ազգական ,
Եւս եւ ծանօթք իւր ամենայն
Ընդ փառս որոյ խայտեալ ցընծան :
- 31 Կացեալ զաւուրս անդ համառօտ
Դառնայր անդրէն դէպ առ իւր հօտ ,
Որ հօգեւոր կարեաց կարօտ
Մընայր Հովուին յիւր բուն արօտ :